ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

19 մարտի, 2020 N6

ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թ. մարտի 16-ի 298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 18-րդ կետերով՝

1. Ժամանակավորապես սահմանափակել որոշման հավելվածով սահմանված արտադրատեսակների արտահանումը Հայաստանի Հանրապետությունից, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրներ: Ընդ որում՝ սույն որոշման հավելվածում նշված բժշկական արտադրատեսակների արտահանումը կարող է Պետական եկամուտների կոմիտեի կողմից թույլատրվել՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գրավոր համաձայնությունը արտահանման ենթակա ապրանքատեսակների և դրանց չափաքանակների վերաբերյալ:
2. Ընդունել ի գիտություն, որ Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև ապրանքների փոխադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. փետրվարի 24-ի N 197-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:
3. ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանին, ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին՝ ապահովել սույն որոշմամբ սահմանված միջոցառումների իրականացումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 19-ին, ժամը 23:00:
5. Սույն որոշումը տարածվում է ինչպես այն արտահանումների վրա, որոնք մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը գտնվում են մաքսային ձևակերպման փուլում, այնպես էլ փաստացի արտահանման ենթակա ապրանքների վրա:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 19/03/20 20:18:17 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ.ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Պարետի 2020 թվականի
Մարտի 18-ի N6 որոշման

ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Ապրանքների նկարագրություն	***ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր***
Շնչառական դիմակներ (респиратор) պաշտպանիչ ակնոցների հետ աշխատող 3-րդ կարգի պաշտպանության, FFP3, մինչև 50 առավելագույն թույլատրելի խտության (ПДК)	6307 90-ից 9020 00 000 0-ից
Շնչառական դիմակներ (респиратор) հակաաէրոզոլային FFP3	6307 90-ից 9020 00 000 0-ից
Պաշտպանիչ ակնոցներ՝ հերմետիկ	9004 90-ից
Լիադեմ դիմակ հակաաէրոզոլային FFP3 զտիչների հետ օգտագործվող	6307 90-ից 9020 00 000 0-ից
Լիադեմ դիմակների հակաաէրոզոլային զտիչներ FFP3	8421 39 200 9-ից 8421 39 600 0-ից 8421 39 800 7-ից 8421 99 000 8-ից
Քիմիական պաշտպանության մեկանգամյա օգտագործման արտահագուստ-կոմբինեզոններ	3926 20 000 0-ից 5603-ից 5903-ից 5906-ից 5907 00 000 0-ից 6210-ից
Քիմիական պաշտպանության մեկանգամյա օգտագործման կոստյումներ	3926 20 000 0-ից 5603-ից 5903-ից 5906-ից 5907 00 000 0-ից 6210-ից
Հակաժանտախտային կոստյում I տիպի բազմակի օգտագործման	6211-ից
Առանձնահատուկ ամրության բախիլներ	3926-ից
Դիմակներ, վիրակապներ, բամբակ, թանզիֆ և այլն	3005
Ախտահանիչ նյութեր, հակավիրուսային, չորրորդային ամոնիումային աղերի և հալոգենային միացությունների հիմքով, այլ	3808 94 100 0-ից 3808 94 200 0-ից 3808 94 900 0-ից

Վիրահատական ձեռնոցներ, մանրէազերծ, չմանրէազերծված, բնական կամ սինթետիկ լատեքսից, ռետինե, սինթետիկ, մեկանգամյա կամ բազմակի օգտագործման,պաշտպանիչ	4015 11 000 0-ից
Բժշկական ախտորոշիչ ձեռնոցներ, հետազոտման համար, մանրէազերծ կամ ոչ մանրէազերծ, բնական կամ սինթետիկ լատեքսից, ռետինե, սինթետիկ, մեկանգամյա կամ բազմակի օգտագործման պաշտպանիչ	4015 19 000 0-ից
Բժշկական դիմակներ ոչ գործվածքային նյութերից մեկանգամյա կամ բազմակի օգտագործման	6307 90 980 0-ից
Բժշկական վիրահատական խալաթներ մեկանգամյա կամ բազմակի օգտագործման	6207-ից 6208-ից 6210 10 920 0-ից
Մեկանգամյա օգտագործման բժշկական հավաքածուներ, ոչ գործվածքային նյութերից , մանրէազերծ կամ ոչ մանրէազերծ, բժշկի հագուստի հավաքածու, պաշտպանիչ, անհատական բժշկական քաղաքացիական պաշտպանության համար հավաքածու առաջնային բժշկասանիտարական և առաջին օգնության համար, սպիտակեղենի և հագուստի մանրէազերծ հավաքածու վիրահատարանների համար, բժշկական վիրահատական կոմբինեզոններ և խալաթներ	6203-ից 6204-ից
Շնչառական սարքավորում այլ և գազային դիմակներ, բացառությամբ պաշտպանիչ դիմակների առանց մեխանիկական դետալների և փոխարինվող զտիչներով	9020 00 000 0-ից
Շնչառական սարքավորում օզոնային, թթվածնային և ցողացրային (աէրոզոլային) կիրառման, արհեստական կամ այլ շնչառության համար	9019 20 000 0-ից
Էթիլային սպիրտ	2207
Ախտորոշիչ թեստեր	3822-ից, 3002-ից